



EUROPEAN UNION

**Հաջորդ կանգառը՝ Եվրոպա: Շարժունակության պլանավորման և կայուն ռազմավարությունների բարելավում Դիլիջանի համայնքի հանրային տրանսպորտի արդյունավետության համար: (Դիմող՝ Դիլիջանի քաղաքապետարան: Բյուջե 500 000 եվրո):**

Նախագծի արդյունքում կստեղծվի միջհամայնքային տեղաշարժը սպասարկող նոր ընկերություն, որը կձառայի Դիլիջանի 15 000 բնակչություն ունեցող բոլոր 7 համայնքներին: Շարժունակության բարելավման արդյունքում տրանսպորտն ավելի հասանելի կդառնա բնակչության համար, հատկապես ամենաաղքատ և խոցելի խմբերի համար, որպեսզի նրանք կարողանան հոգալ իրենց կարիքները:

**Աղքատության նվազեցում Ուրցաձոր համայնքում անհատ-ձեռներեցության հնարավորությունների միջոցով: (Դիմող՝ Վայրի բնության և մշակութային արժեքների հիմնադրամ: Բյուջե՝ 500 000 եվրո)**

Ծրագիրը կտրամադրի եկամտի և զբաղվածության հնարավորություն Ուրցաձորի համայնքի բնակիչներին, որտեղ բնակվում են շուրջ 80 ընտանիքներ, գործազուրկ երիտասարդներ ու փախստականներ: Բիզնես գործընկերության և բազմաշերտ համագործակցության նոր հարթակներ կստեղծվեն համայնքների միջև, որի արդյունքում կստեղծվեն համատեղ մշակված շուրջ 15 բիզնես նախագծեր: Օրինակ՝ զբոսաշրջիկների համար կացարան և նախաճաշ տրամադրելու հնարավորություն, ինչը կզարգացնի տեղական զբոսաշրջությունը, փոքր արտադրություններն ու գյուղատնտեսական արտադրությունը:

**Մաքուր միություն: Հասանելի ծառայություններ Գորիսի և Սառնակունքի համայնքի համար (Դիմող՝ Միսիանի համայնքային միություն: Բյուջե՝ 500 000 եվրո)**

Ծրագիրը կբարձրացնի կոշտ թափոնների կառավարման կազմակերպումը Գորիս համայնքում, իսկ Սառնակունքում կստեղծվի Կոշտ թափոնների կառավարման ընկերություն: Ծրագրի օգնությամբ նրանց կտրամադրվեն մեքենաներ/ սարքավորումներ, և կբարելավվի անհրաժեշտ ենթակառուցվածքը, որպեսզի երկու համայնքներում էլ կոշտ թափոնների կառավարումն արդյունավետ անցկացվի:

Ծրագիրը կօգնի երկու համայնքներում մշակել կոշտ թափոնների կառավարման ռազմավարական պլան և ներառել այն համայնքի 4-ամյա ռազմավարական պլանի մեջ:

**Միասնական ջանքեր, բազմապատկված հետևանքներ (Դիմող՝ Աշխատանք և հայրենիք: Բյուջե՝ 380 000 եվրո)**

Նախագծի շնորհիվ կբարձրացվեն Վայք համայնքի գյուղատնտեսական ու տրանսպորտային ենթակառուցվածքները. գյուղատնտեսական մեքենաների փոքր կայարանի կառուցում, Վայքի գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ շուկայի ստեղծում, բեռնատար մեքենաների ձեռքբերում, որոնց շնորհիվ հնարավոր կլինի կոլեկտիվ սկզբունքով տեղափոխել համայնքի ֆերմերների գյուղատնտեսական արտադրանքը, ինչպես նաև ձեռք կբերվի մարդատար 2 ավտոբուս, որոնք կծառայեն ինչպես դպրոցականների, այնպես էլ համայնքի այլ բնակիչների տեղափոխելու համար:

Նախագիծը կաջակցի նաև համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ), որպեսզի նրանք բարելավվեն կոշտ թափոնների կառավարման գործընթացը, նախադպրոցական և արտաուսումնական, գյուղատնտեսական և միջհամայնքային տրանսպորտային ծառայությունները: